ԱՐՑԱԽԻ ՎԵՐԱԲԱՑՈՒԱԾ ԹԵՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1988-1991)

Տ. ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ԱՍՐԵԱՆ
monk-deacon@mail.ru

ՄՈՒՏՔ

2018ը հայ ժողովրդի համար նշանաւորող հանգամանքներից է արցախեան շարժման 30ամեայ տարեդարձի տօնակատարումը: Համահայկական պայքարը վճռորոշ նշանակութիւն ունեցաւ նաեւ Արցախում հոգեւոր կեանքի վերազարթօնքի եւ Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի վերաբացման հարցում:

Ոչ-հեռաւոր անցեալի պատմութեան այս պայծառ էջերում առկայ են նաեւ սակաւ յայտնի կամ բոլորովին անյայտ էջեր: *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի նախորդ հատորներում նախաձեռնած մեր այս ուսումնասիրութեան հերթական յօդուածում անդրադարձել ենք 1988-91 շրջանին՝ իմի բերելով ինչպէս արդէն լուսաբանուած ու յայտնի փաստերը, այնպէս էլ մինչ այսօր անյայտ մնացած պատմական կարեւոր տուեալներ: Առաջին անգամ ընթերցող լայն շրջանակների համար մատչելի են դառնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Արցախի թեմի արխիւներից, ինպէս նաեւ որոշ բանաւոր աղբիւրներից ստացուած մի շարք կարեւոր փաստեր ու տուեալներ, որոնք վերաբերում են խնդրոյ առարկայ պատմական շրջանին ու իրադարձութիւններին: Ճշգրտուել ու սրբագրուել են նաեւ տուեալ շրջանին առնչուող սակաւաթիւ գրականութեան մէջ առկայ որոշ սխալներ ու թիւրիմացութիւններ:

Անշուշտ մեր այս ուսումնասիրութեամբ բոլորովին յաւակնութիւն չունենք նշեալ հարցը լիարժէք ուսումնասիրուած համարելու: Այդուհանդերձ համարձակւում ենք յուսալ, որ չնչին ներդրում կարող ենք բերել այդ ճանապարհին:

ԱՐՑԱԽԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1988ի արցախեան շարժումն ազդարարեց ինչպէս ազգային, այնպէս էլ հոգեւոր վերածննդի նոր դարաշրջանի սկիզբը: Արցախահայութիւնն սկսեց ազատագրուել իրեն պարտադրուած կրկնակի չարիքից՝ ադրբեջանական լծից եւ մարտնչող անաստուածութեան աւերիչ հետեւանքներից: Շարժման հենց առաջին իսկ ամիսներին երեւան եկան արցախահայութեան հոգեւոր զարթօնքի վառ վկայութիւնները. տասնամեակներով Մայր Եկեղեցուց հարկադրաբար կտրուած եւ հոգեւոր սովի մատնուած արցախցիները, ի շարս այլ կարեւոր հարցերի, սկսեցին վեր հանել նաեւ փակուած եկեղեցիների վերադարձման եւ վերաբացման պահանջները: Ինչպէս նշում է Շահէն Մկրտչեանը. «սկսուեց ղարաբաղեան հզօր փոթորիկը,

որը քշեց տարաւ կեղծիքի եւ երկերեսանիութեան «կուսակցական» «խորհրդային» համակարգը, ազգային արժանապատուութեան եւ հպարտութեան շունչ փչեց ազգայնօրէն նուաղած հոգիներին: Արցախի վանքերը, եկեղեցիները այլեւս քաղաքական արդարացման կարիք չունէին: Արցախցիները յետայսու իրենք պէտք է որոշէին իրենց անելիքները»[1]: Մայր Աթոռի եւ Արցախի թեմի արխիւներում առկայ են մի շարք գրութիւններ[2], որոնցով Արցախի տարբեր համայնքներից պահանջներ են ներկայացնում ԼՂԻՄ շրջանային եւ մարզային իշխանութիւններին՝ հաւատացեալներին վերադարձնելու եւ կրկին գործող դարձնելու Գանձասարի ու Ամարասի վանքերը եւ այլ եկեղեցիներ: Իրավիճակն արդէն բոլորովին փոխուել էր, տեղական իշխանութիւններում այլեւս մեծամասնութիւն չէին կազմում Բաքուի հակահայկական եւ հակաեկեղեցական քաղաքականութեան կատարածները: Ասուածի վկայութիւններից է նաեւ ԼՂԻՄ ժողովրդական պատգամաւորների խորհրդի գործկոմի 1988 Յունիսի 16ի համար 5/136 որոշումը, որով նախ արձանագրւում է, որ մարզային, շրջանային եւ այլ բարձր ատեաններում Մարտակերտի, Մարտունու եւ այլ շրջաններից ստացուել են բազմաթիւ դիմումներ՝ Գանձասարի եւ Ամարասի վանքերի վերականգնման եւ վերաբացման խնդրանքով: Հաղորդւում է նաեւ, որ Մարտունու եւ Մարտակերտի շրջանային իշխանութիւնները հաւանութիւն են տուել ստացուած դիմումներին եւ դրանք բաւարարելու միջնորդութեամբ դիմել մարզային իշխանութիւններին: Ապա հրապարակւում է ԼՂԻՄ ժողովրդական պատգամաւորների խորհրդի գործկոմի որոշումը. «1. Բաւարարել մարզի հաւատացեալ աշխատաւորների միջնորդութիւնը՝ հաստատելով ժողովրդական պատգամաւորների խորհրդի Մարտակերտի եւ Մարտունու շրջանային գործկոմների .... որոշումները Գանձասարի եւ Ամարասի վանքերի վերականգնման եւ վերաբացման վերաբերեալ: 2. Խնդրել ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Կրօնի գործերի խորհրդին եւ Ադրբեջանական ԽՍՀ՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Կրօնի գործերի խորհրդի լիազօր Խորհրդին՝ դրական լուծում [տալ] տուեալ հարցին: 3. Խնդրել Հայաստանի ԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի Խորհրդին՝ աջակցութիւն ցուցաբերել մարզի տարածքում Հայկական ճարտարապետութեան եւ մշակոյթի՝ նշուած յուշարձանների գործունէութեան վերականգնմանը: 4. Յանձնարարել մարզկոմի մշակոյթի վարչութեանը, Մարտակերտի եւ Մարտունու Ժողովրդական պատգամաւորների շրջանային գործկոմներին՝ արագացնել հայկական մշակոյթի վերոնշեալ յուշարձանների անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը»[3]:

Արցախահայութիւնն սկսում է նաեւ նորովի վերանորոգել կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ: *Էջմիածին* ամսագրից տեղեկանում ենք, որ բազմաթիւ ուխտատրների խմբեր սկսում են աւելի ու աւելի յաճախ ուխտի գնալ Մայր Աթոռ. «Նրանցից շատերը արժանանում են Վեհափառ Հայրա-

պետի տեսութեանը Վեհարանում եւ վերադառնում հայրենի Արցախ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի խօսքով եւ օրհնութեամբ մխիթարուած: .... Հաւատում ենք, որ արցախահայերի համար ուխտագնացութիւնը դէպի Մայր Աթոռ հոգեւոր մխիթարութեան եւ ազգային ակունքների հետ շփման անխառն ապրումների աղբիւր կը հանդիսանայ նաեւ յետագայում»[4]:

Այսպիսով արցախահայութիւնը լուրջ հիմքեր էր ստեղծում Արցախի հոգեւոր-եկեղեցական կեանքի վերականգնման համար, ինչն աստիճանաբար պիտի վերածուէր թեմի վերաբացման: Այս գործընթացը չէր կարող դուրս մնալ Մայր Աթոռի ուշադրութեան կենտրոնից: Արցախեան շարժումն իրականութիւն էր դարձնում Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վաղեմի երազանքն ու նրա թափած բազմամեայ ջանքերը: Հայրապետը, ի սկզբանէ արցահայութեան արդար դատին գործուն պաշտպան կանգնելուն զուգահեռ, սկսում է նաեւ նախապատրաստական քայլեր ձեռնարկել թեմի վերաբացման ուղղութեամբ: Խորհրդային Ադրբեջանի կառավարութիւնն իր հակաեկեղեցական քաղաքականութիւնը հասցրել էր նրան, որ 1980ականների վերջին Արցախը Հայ Եկեղեցու համար փակ տարածք էր դարձրել եւ արգելել հայ հոգեւորականների մուտքն այնտեղ: Միակ հոգեւորականը, ով առանց լուրջ խոչընդոտների մուտք ունէր ԼՂԻՄ տարածք, ՀՀ ԶՈՒ ներկայիս հոգեւոր առաջնորդ Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանն էր: Պատճառը շատ պարզ էր. վերջինս ծնունդով արցախցի է (Արցախի Մարտունու շրջանի Ծովատեղ գիւղից) եւ, իբրեւ սովորական քաղաքացի, իր ընտանեկան հարկ այցելելու լիարժէք իրաւունք ունէր: Հենց նրա միջոցով էլ սկզբնական շրջանում Վազգէն Ա.ն կարեւոր տեղեկութիւններ էր ստանում արցախահայութեան հոգեւոր վիճակի մասին՝ պարբերաբար համապատասխան առաքելութեամբ գործուղելով Արցախ[5]:

1988 Յուլիսի 27ին Վազգէն Ա. կաթողիկոսը նամակ է յղում ԽՍՀՄ գերագոյն խորհրդի նախագահ Միխայիլ Գորբաչովին՝ կրկին բարձրաձայնելով Լեռնային Ղարաբաղում գործող եկեղեցիների բացակայութեան խնդիրը: Վեհափառն իր նամակում մասնաւորապէս նշում է. «Վերջին տասնհինգ տարիներին Մենք մի քանի անգամներ թէ՛ գրաւոր եւ թէ՛ բանաւոր խնդրանքներ ենք ներկայացրել՝ գոնէ մի վանք՝ Գանձասարի վանքը բացելու, սակայն Բաքուի իշխանութիւնները ընթացք չեն տուել:

Գանձասարի վանքը կառուցուել է 1238ին հայկական դասական ճարտարապետական ոճով եւ եղել է միշտ Հայ Եկեղեցու կենտրոնը ամբողջ Ղարաբաղի հայ քրիստոնեաների: Բոլորովին անհասկանալի եւ անհիմն կերպով վերջերս Բաքուի իշխանութիւնները որոշել են Ղարաբաղ-Արցախի պատմական հայ վանքերը նկատել ոչ-հայկական: Սա աղաղակող հակապատմական եւ ոչ-բարեկամական մի վերաբերմունք է, ժխտելու փորձ հայ քրիստոնեայ ժողովրդի բազմադարեան ներկայութիւնն ու կեանքը Լեռնային Ղարաբաղում:

Լեռնային Ղարաբաղի հայ եկեղեցիների հարցին տեղեակ է Մոսկուայի Կրօնական Դաւանութեանց Խորհուրդը եւ յոյս ունենք, որ նաեւ Ձեր բարեացակամ օժանդակութեամբ արդար կարգադրութիւններ կը կատարուեն մեր երկրի օրէնքների համաձայն, բաւարարելու համար Ղարաբաղի հաւատացեալների բազմաթիւ դիմումները, միքանի վանքեր ու եկեղեցիներ բացելու համար:

Մենք վստահ ենք, թէ Լեռնային Ղարաբաղում 3-4 վանքեր ու եկեղեցիներ բացելը մեծ նպաստ պիտի լինի բնակչութեան հոգեկան վիճակի խաղաղեցման [համար]»[6]:

ԹԵՄԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Խորհրդային կայսրութիւնն սկսել էր ցնցուել ու ճաքեր տալ: Անժխտելի է այն փաստը, որ ամբողջատիրական այդ պետութեան ողջ պատմութեան ընթացքում աննախադէպ երեւոյթ էր Արցախեան զանգուածային համազգային շարժումը, որը «մարտահրաւէր էր նետել քաղաքական-վարչական համակարգին, կուսակցութեան մենիշխանութեանը եւ պետութեանը»[7]: Չնայած այն հանգամանքին, որ ԽՍՀՄ կենտրոնական իշխանութիւններն այդպէս էլ դասեր չքաղեցին անցեալից եւ մինչեւ վերջ էլ յանցագործ յամառութեամբ շարունակեցին հովանաւորել ու պաշտպանել Ադրբեջանի հակահայ ոճիրներն ու ցեղասպան քաղաքականութիւնը, այդուհանդերձ չէին կարող բոլորովին անտեսել համահայկական հուժկու ըմբոստութիւնը եւ փորձում էին որոշ հարցերում զիջումների գնալով՝ մեղմացնել փոթորկած հայութեան զայրոյթը: Թերեւս որոշակիօրէն դրանով էր պայմանաւորուած այն, որ 1988 Նոյեմբերին Վազգէն Ա. կաթողիկոսը կարողանում է Մոսկուայից արտօնութիւն ստանալ՝ Արցախում չորս եկեղեցիներ բացելու համար[8]: Սակայն գերնպատակը միայն միքանի եկեղեցիներ բացելով բաւարարուելը չէր: Պահը լիովին հասունացել էր՝ պատմական անարդարութիւնը սրբագրելու եւ վերաբացելու Արցախի թեմը: 1989 Մարտի 10ին Վազգէն Ա.ը վեհարան է հրաւիրում Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսեանին եւ յայտնում իր պատմական որոշման մասին. հայրապետական տնօրինութեամբ թեմը վերաբացւում է, իսկ թեմակալ առաջնորդ է նշանակւում Պարգեւ սրբազանը[9]: Վեհափառը յանձնարարում է նորանշանակ առաջնորդին մեկնել Արցախ, տեղում ծանօթանալ իրավիճակին եւ նախանշել առաջիկայ անելիքների շրջանակը: Պարգեւ սրբազանն Արցախ է մեկնում Մարտի 12ին՝ ուղեկցութեամբ Վրթանէս աբեղայ Աբրահամեանի: Արցախի թեմի առաջնորդն ու ապագայ փոխառաջնորդը նախ Ստեփանակերտում հանդիպում են ունենում ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսեանի հետ, վերջինիս կողմից արժանանում դրական ընդունելութեան: Այնուհետեւ այցելում են Գանձասար եւ Ամարաս, ապա վերադառնում Մայր Աթոռ, որտեղ Պարգեւ սրբազանը Վազգէն վեհափառին է ներկայացնում անդրանիկ այցից ստացուած յուսադրող տպաւորու-

թիւնները եւ առաջիկայ անելիքների ահռելի ծաւալը: Առաջնահերթ խնդիրների մէջ մտնում էր եկեղեցիների վերականգնման հարցը: Այդ խնդիրը գրագէտ կազմակերպելու համար վեհափառը ծրագրում է արագօրէն կազմել համապատասխան մասնագէտների խումբ եւ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսեանի հետ գործուղել Արցախ:

Արցախի թեմի առաջնորդի երկրորդ այցն Արցախ երկար սպասեցնել չի տալիս, այն տեղի է ունենում Ապրիլի 25ին: Այս անգամ Արցախի թեմի առաջնորդն իր հետ տանում է անուանի ճարտարապետերից կազմուած մի խումբ՝ Վարազդատ Յարութիւնեան, Ա. Գալիկեան, Բ. Արզումանեան, Հ. Բաբախանեան: Պարգեւ սրբազանին ուղեկցում էր նաեւ Միքայէլ աբեղայ Աջապահեանը[10]: Թեմական առաջնորդն ու նրա ուղեկիցները նախ Ստեփանակերտում հանդիպում են ԼՂԻՄ Յատուկ Կառավարման Կոմիտէի նախագահ Արկադի Վոլսկու հետ: Վերջինս, որ հայամէտ կեցուածք ունէր, ցուցաբերում է ջերմ ընդունելութիւն, խոստանում հնարաւորինս աջակցել եկեղեցիների վերաբացմանն ու վերածնուող թեմի կայացմանը:

Այնուհետեւ շուրջ մէկ շաբաթ, ճարտարապետերն ուսումնասիրում են առաջնահերթ բացուելիք վանքերն ու եկեղեցիները, կատարում մասնագիտական համապատասխան եզրահանգումներ: Աշխատանքներն աւարտելուց յետոյ Մայիսի սկզբին Պարգեւ սրբազանն ու նրա ուղեկիցները վերադառնում են Մայր Աթոռ:

Այսպիսով նախապատրաստական աշխատանքներն աւարտուած էին, վերջնական քայլը հասունացել էր: Յուլիսի 5ին, Վազգէն Ա. կաթողիկոսի օրհնութեամբ, Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսեանը չորս հոգեւորականների հետ վերջնականապէս տեղափոխւում է Արցախ (նստավայրը՝ Ստեփանակերտ) եւ հիմք դնում վերաբացուած թեմի նորօրեայ գործունէութեանը: Թեմական առաջնորդը Վազգէն վեհափառի տնօրինութեամբ Արցախի թեմ նշանակուած չորս հոգեւորականներից Միքայէլ աբեղայ Աջապահեանին նշանակում է Գանձասարի վանահայր, Վրթանէս աբեղայ Աբրահամեանին՝ Ամարասի վանահայր, Մկրտիչ քահանայ Թովմասեանին՝ Խնածախ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու եւ Ասկերանի շրջանի ու Ստեփանակերտի հոգեւոր հովիւ, իսկ Թադէոս քահանայ Գէորգեանին՝ Ներքին Հոռաթաղ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու եւ Մարտակերտի շրջանի հոգեւոր հովիւ:

Կարող ենք ենթադրել, որ Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ, Ամարասի Ս. Գրիգորիս, Խնածախի Ս. Աստուածածին եւ Ներքին Հոռաթաղի Ս. Աստուածածին եկեղեցիներն այն չորս եկեղեցիներն էին, որոնց վերաբացման վերաբերեալ Վազգէն Ա.ին յաջողուել էր թոյլտուութիւն ստանալ խորհրդային կենտրոնական իշխանութիւններից: Շուտով սրանց աւելանում են նոր եկեղեցիներ: Պարգեւ սրբազանն այդ հարցով դիմում է Վոլսկուն, ով, ինչպէս նշեցինք, նախապէս խոստացել էր այդ հարցում իր օժանդակութիւնը բերել: Վոլսկին իր խօսքի տէրն էր, եւ նրա ջանքերով

Մոսկուան թոյլատրում է եւս երեք եկեղեցի վերաբացել. Մարտակերտի Ս. Կարապետ եւ Հադրութի Ս. Յարութիւն եկեղեցիները եւ Հադրութի շրջանում գտնուող Սպիտակ Խաչ վանքը: Մայր Աթոռի եւ Արցախի թեմի արխիւներում առկայ են մի շարք վաւերագրեր, որոնք վկայում են, որ նշուած եւ այլ եկեղեցիների հարցով տեղի համայնքներն աւելի վաղ դիմել էին իշխանութիւններին՝ դրանք վերաբացելու խնդրանքով[11]:

Արցախի թեմի վերաբացումը եւ եկեղեցիների վերադարձի գործընթացի մեկնարկը մեծ ոգեւորութիւն է առաջացնում արցախահայութեան շրջանում՝ կարեւոր խթան դառնալով ազգային-ազատագրական պայքարի ելած ժողովրդին նոր յոյսերով ոգորելու եւ առաւել գօտեպնդելու գործում: Ինչպէս նշում է Մկրտչեանը, Արցախի ժողովուրդը «նորից երկիւղածութեամբ ու հպարտութեամբ մտաւ իր սրբազան տաճարները, հաղորդակից դարձաւ Աստծոյ հետ, լոյսի, յոյսի, հաւատքի մոմեր վառեց»[12]: Տասնամեակներ տեւած բոլշեւիկեան անաստուածութեան աւերածութիւններն ու թուրք այզգայնամոլական բռնութիւններն անզօր էին եղել արցախահայութեան հոգում առ Աստուած հաւատքն ու իր Մայր Եկեղեցու նկատմամբ ունեցած որդիական սէրը մարելու համար: Թերեւս կրկին տեղին է յիշել նշուած ժամանակահատուածից ուղիղ 60 տարի առաջ խորհրդային իշխանութիւններին ուղղուած երջանկայիշատակ Գէորգ Ե. կաթողիկոսի խօսքերը, որը մենք սոյն ուսումնասիրութեան առաջին յօդուածում բոլորովին էլ պատահական չենք բնութագրել որպէս մարգարէական. «Ճշմարիտ է, այս գործելակերպի հետեւանքով եկեղեցիների դռները կ գոցուեն, քահանաներն ու հաւատացեալները կը դադարեն եկեղեցի յաճախելուց, սակայն նոցա սրտերը միշտ բաց կը լինեն աղօթքներ վերառաքելու Աստծուն եւ սիրելու իրենց հնադարեան մայրենի եկեղեցին, որով կառավարութիւնն իրապէս հասած չի լինի իր նպատակին»[13]: Արցախի թեմի վերաբացումն ու արցախահայութեան հոգեւոր վերածնունդը թերեւս լաւագոյն իրականացումն են վերոնշեալ խօսքերի: Երեւոյթը գրեթէ համազօր էր արցախահայութեան երկրորդ դարձին: Աստիճանաբար մեծանում էր զանգուածաբար մկրտուողների թիւը, որոնց մէջ փոքր չէր նաեւ մատաղ սերնդի քանակը: Օրինակ՝ 1989 Սեպտեմբերի 1ին թեմի առաջնորդն ու հոգեւորականները, ճեղեքելով շրջափակումը, հասնում են Բերդաձոր եւ կատարում ուսումնական տարուայ օրհնութիւն, այնուհետեւ՝ աշակերտների մկրտութիւն: Սեպտեմբերի սկզբին մկրտում են նաեւ Ստեփանակերտի մանկապարտէզի երեխաները[14]:

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

1989 Հոկտեմբերի 1ը, երբ Հայ Առաքելական Եկեղեցին նշում էր Վարագայ Ս. Խաչի տօնը, Արցախի հայոց թեմի նորագոյն պատմութեան մէջ նշանաւորուեց որպէս շրջադարձային նոր ելակէտ: Այդ օրը վերաօծուեց եւ վերաբացուեց Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին: Աւելի քան

կէսդարեայ հարկադիր դադարից յետոյ Գանձասարի վանքում, ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոսի, մատուցուեց անդրանիկ Ս. Պատարագը: Ժամանակի ծանրագոյն իրավիճակն անգամ անզօր եղաւ խափանել ինչպէս պատմական այդ կարեւոր իրադարձութիւնը, այնպէս էլ բազմաթիւ հաւատաւոր հայորդիների մասնակցութիւնը երկար սպասուած նուիրական այդ պահին. «Թէեւ Արցախի եւ Հայաստանի շրջափակումը լուրջ դժուարութիւններ էր յարուցել Գանձասարի վանք հասնելուն, սակայն, այնուամենայնիւ, դէպի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին էին ձգտում բազմահարիւր հայեր ինչպէս Արցախից, այնպէս էլ Մայր Հայաստանից:

«Հայր Մեր»ից առաջ, խուռներամ բազմութեան ներկայութեամբ պատարագիչ սրբազանը ոգեշունչ քարոզ խօսեց՝ վեր հանելով օրուայ պատմական նշանակութիւնը ողջ հայ ժողովրդի համար: Արբազանը արեց նաեւ բարեմաղթութիւններ մեր ժողովրդի արդարացի պայքարի մօտալուտ յաղթանակի համար»[15]:

Արցախցի լրագրող Վարդգէս Բաղրեանը, ով նկարահանել ու լուսաբանել է պատմական արարողութիւնը, կարեւոր մանրամասներ է հաղորդում՝ միաժամանակ սեփական օրինակով ներկայացնելով իւրաքանչիւր արցախցու ապրումներն ու խանդավառութիւնը. «Սովետների երկիրը մեզ դաստիարակել էր աթէիզմի ոգով, «հաւատք» ասուածը գրեթէ քերել էին մեր մտածելակերպից ու հոգուց: Թւում էր անհնար կը լինի վերականգնել հաւատքն առ Աստուած: Սակայն այն, ինչ տեղի ունեցաւ 89ի Հոկտեմբերի 1ին, եկաւ ապացուցելու, որ արցախցու անթեղուած հաւատքը սպասում էր յարմար առիթի, որպէսզի պոռթկայ, ինչպէս պոռթկաց Ղարաբաղեան շարժումը:

Աշնանային այդ հիասքանչ օրը, ասես, ողջ Արցախը հաւաքուել էր Մարտակերտի շրջանի Վանք գիւղում, աւելի ստոյգ Գանձասարում: Այդ օրն Արցախի նորագոյն պատմութեան մեջ կը յիշուի որպէս հոգեւոր վերածննդի օր: Երկարատեւ ընդմիջումից յետոյ նորից ղօղանջեցին Գանձասարի վանքի զանգերը, եւ Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսեանը մատուցեց սուրբ պատարագ: Դա պատարագ չէր սոսկ, այլեւ մեր լինելիութեան, յարատեւութեան խորհրդանիշ, մեր արդար պայքարը շարունակելու հաւաստում: Այդպիսի պատարագ ես երբեք չեմ տեսել»:

Բաղրեանին իր տպաւորութիւններն է փոխանցում նաեւ մի արտասահմանցի լրագրող, որը նոյնպէս նկարահանումներ էր կատարում. «Իհարկէ ես պատկերացնում եմ, որ սա իսկապէս տօն է ողջ հայ ժողովրդի համար: Խորհրդանշական է, որ բլոկադայի, ծանր պաշարման օրերին ժողովուրդն իր մէջ ուժ գտաւ ո՛չ միայն պահպանելու իր պատմութիւնը, այլեւ եկեղեցի վերաբացելու: Ես գտնում եմ, որ սա տօն է ոչ միայն ձեր ժողովրդի

համար: Միայն մեծ ազգը կարող է իր մէջ ուժ գտնել եւ այսպիսի ծանր պայմաններում եկեղեցի վերաբացել»:

Յաւարտ արարողութեան Արցախի հեռուստատեսութեանը տուած հարցազրոյցում Պարգեւ սրբազանը նշում է. «Այո՛, ինձ բախտ վիճակուեց, եւ ես շատ ուրախ եմ դրա համար: Մեծ պատիւ ստացայ Աստծոյ եւ Ձեր առջեւ՝ անդրանիկ պատարագը մատուցել մեր պատմական Գանձասարի վանքում 60 տարուայ դադարից յետոյ: Ես ուղղակի ուզում եմ, որ մեր պատարագները, որ պիտի տեղի ունենան Գանձասարի վանքում, նոր, մեծ յոյս ներշնչեն արցախահայութեան սրտերում, որովհետեւ այս նեղ պահին Աստուած ինքն իր լոյսն է բերում Արցախ աշխարհ: Այնպէս որ ապրենք յոյսով եւ մեծ-մեծ հաւատքով»: Արցախի միւս եկեղեցիների ու վանքերի խնդրով սրբազանը վստահեցնում է, որ մօտիկ ժամանակներում դրանք նոյնպէս հերթով կը սկսեն բացուել: Բաղրեանը յաւելում է. «Եւ սա ասուել է այն ժամանակ, երբ վիճակը, ճիշտ է, օրհասական չէր, բայց նոյնիսկ ներկան էր մշուշոտ, էլ ուր մնաց լաւ ապագան: Իսկ Սրբազան հայրը տեսնում էր այդ ապագան: Լոյսի շողը կար, մնում էր այն պարզել գալիքին»[16]:

Գանձասարում վաղ առաւօտից՝ ուշ երեկոյ շարունակւում էր ուխտատրների հոսքը. այդ օրը տեղի ունեցան տասնեակ մկրտութիւններ[17]:

Այդուհետ Վարագայ Ս. Խաչի տօնը կրկնակի նշանակութիւն ստացաւ Արցախի թեմի տօնացոյցում՝ խորհրդանշելով նաեւ Արցախի թեմի վերածնունդը[18]:

Գանձասարի վերաբացումից յետոյ քարոզչութիւն եւ հոգեւոր արարողութիւններ են կատարւում նաեւ Հիւսիսային Արցախի գիւղերում: Հոկտեմբերի 3ին մկրտւում է Գիւլիստանի գրեթէ ողջ բնակչութիւնը, իսկ Հկտեմբերի 4ին նոյնը կատարւում է Գետաշէնում[19]:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԱՄԱՐԱՍԻ ՎՐԱՅ

Հոկտեմբերի 16ին Ամարասում մեծ շուքով նշւում է Հայոց Արեւելից Կողմանց առաջին հոգեւոր առաջնորդ Ս. Գրիգորիսի Գիւտ նշխարաց տօնը: Տօնական օրուայ մանրամասները ներկայացնում է *Էջմիածին* ամսագիրը. «Այսօր, երկարատեւ ընդմիջումից յետոյ առաջին անգամ լինելով, Արցախահայութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանից եւ սփիւռքից ժամանած հիւրերը՝ աւելի քան 500 հոգի, արհամարհելով շարունակուող շրջափակման յարուցած դժուարութիւնները, Արցախի թեմի հոգեւոր տեսուչ Տ. Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսեանի գլխաւորութեամբ ուխտի գնացին Ամարասի վանք՝ խոնարհուելու մեծ սրբի նշխարների առջեւ եւ աղօթելու Հայաստան աշխարհի եւ հայ ժողովրդի պայծառութեան համար:

Այստեղ գերաշնորհ սրբազան հօր, ինչպէս նաեւ Գանձասարի վանահայր Տ. Միքայէլ Աբղ. Աջապահեանի եւ Ասկերանի շրջանի հոգեւոր հովիւ Տ. Մկրտիչ քհն. Թովմասեանի մասնակցութեամբ կատարուեց առաւօտեան ժամերգութիւն, որից յետոյ Գանձասարի վանքի քառաձայն երգչա-

խումբը (խմբավար՝ Արկադի Բարսեղեան) մեծ ոգեւորութեամբ կատարեց հատուածներ Մակար Եկմալեանի պատարագից: Ապա տեղի ունեցաւ Ս. Պսակի օրհնութիւն եւ 12 անձանց մկրտութիւն: Մինչեւ երեկոյ շարունակուեց ժողովրդական տօնախմբութիւնը Ամարասի վանքի հինաւուրց պարիսպների շուրջ»[20]:

Գանձասարի վերաբացումից յետոյ շուրջ մէկ տարի անց՝ 1990 Սեպտեմբերի 8ին, իրականութիւն դարձաւ Արցախի թեմի համար յաջորդ կարեւորագոյն իրադարձութիւնը՝ վերաօծուեց եւ վերաբացուեց նաեւ Ամարասի Ս. Գրիգորիս եկեղեցին: Սակայն այդ պայծառ իրադարձութիւնը խորհրդային իշխանութիւնների կողմից փորձ արուեց մթագնել: Արցախի թեմի եւ հոգեւորականութեան հանդէպ փոքր ինչ դրական վերաբերմունք ունեցող Վոլսկու հեռանալուց եւ ԼՂԻՄում յայտնի հայատեաց Վ. Պոլիանիչկոյի յայտնուելուց յետոյ (1989 Նոյեմբեր) կտրուկ աւելի էր ծանրացել նաեւ նորաբաց թեմի վիճակը, որի նկատմամբ խորհրդային իշխանութիւնները պարբերաբար արգելքներ էին առաջացնում ու սադրանքների դիմում: Նմանատիպ սադրանքներից մէկն էլ հենց Ամարասում տեղի ունեցածն էր: Ստորեւ բերում ենք Պարգեւ սրբազանի՝ Սեպտեմբերի 10ին Վազգէն վեհափառին ուղարկած նամակը, ուր մանրամասնօրէն ներկայացուած է ողջ կատարուածը. «Ձերդ սրբութեանը յայտնում եմ, որ սոյն թուի Սեպտեմբերի 8ին Սբ. Աստուածածնի ծննդեան տօնին, մէկօրեայ հսկումից յետոյ վերաբացեցինք Ամարաս վանքի Սբ. Գրիգորիս եկեղեցին: Միւս օրը, որը Կիրակի էր, պատարագի ընթացքում տեղի ունեցաւ սարկաւագական ձեռնադրութիւն, նախօրօք Ձերդ սրբութեան օրհնութեամբ եւ թոյլտուութեամբ: Ամէն ինչ անցաւ շատ գեղեցիկ, ոգեշունչ, բազում ժողովրդի ներկայութեամբ: Ցաւօք սրտի, Սեպտեմբերի 9ին, երեկոյեան ժամը 19:00ին, սովետական բանակի ներկայացուցիչները, թուով 10 մարդ, եկան Ամարասի վանք, կոպիտ ձեւով վարուեցին վանահօր, սարկաւագի եւ դպիրի հետ, որից յետոյ խուզարկեցին ամբողջ վանքի համալիրը: Նոյն գիշերուայ ընթացքում եւս երեք անգամ զինուորականները ներխուժեցին վանք, խուզարկումներ կատարեցին, նաեւ կրակ բացեցին վանքի պահակի կնոջ վրայ: Փառք Աստծոյ, որ գնդակները պատահաբար չկպան Նորա Ծատուրեանին, որը իր ամուսնու հետ հրաշքով փրկուել են Բաքուի ջարդերից:

Միաբանական շէնքի վրայ մնացել են գնդակների հետքերը, ընդ որում զինուորականները սպառնացել են պահակին եւ նրա կնոջը գնդակահարմամբ, եթէ նրանք պատմեն կատարուածի մասին:

Սեպտեմբերի 10ին վաղ առաւօտեան նորից կրակ են բացել միաբանական շէնքի վրայ, իսկ աւելի ուշ զինուորները վերադարձել են վանք եւ սկսել են գետնից հաւաքել փամփուշտների պարկուճները՝ փորձելով սրբել սեփական յանցագործութեան հետքերը: Այսօր, փաստօրէն սրբապղծութեամբ եւ վանդալիզմով զբաղւում է ոչ թէ օտարադաւան որեւէ ժողովուրդ

կամ խուլիգաններ, այլ սովետական բանակը, փորձելով դրանով իսկ Արցախի խնդրին եւս մի երանգ տալ՝ կրօնական: Նմանօրինակ սադրանքը եթէ կրկնուի, ապա էլ աւելի կը բարդանայ առանց այն էլ ծայրաստիճան սրուած վիճակը Արցախում եւ կը յանգեցնեն անկանխատեսելի հետեւանքների: Ըստ իս որոշ մութ ուժեր արդէն փորձում են Արցախի հարցը ներկայացնել իբրեւ միջկրօնական բախում նաեւ, դրանով էլ աւելի անլուծելի դարձնել արցախահայերի ինքնորոշման արդարացի իրաւունքը»[21]:

Արցախի թեմի առաջնորդը նոյն օրը գրեթէ նոյնաբովանդակ բողոքի նամակ է յղում նաեւ ԼՂԻՄ պարետի ժամանակաւոր պաշտօնակատար գնդապետ Օչիննիկովին՝ տեղի ունեցածը բնորոշելով որպէս սրբապղծութիւն եւ վանդալիզմ: «Արտայայտելով ԼՂԻՄ հաւատացեալների ու անձամբ իմ վրդովմունքը՝ Ձեզ իմ բողոքն եմ յայտնում՝ պահանջելով բացատրութիւն եւ նմանատիպ գործողութիւնների դադարեցում: Նախազգուշացնում եմ Ձեզ, որ նման վտանգաւոր քաղաքականութիւնն ու արկածախնդրութիւնը, որոնք իրականացնում է բանակը, կարող են անջնջելի արատաւոր հետք թողնել Ձեզ վրայ, որպէս պարետի ժամանակաւոր պաշտօնակատարի, եւ սովետական մարտիկի ու սպայի պատուի վրայ»՝ եզրափակում է Պարգեւ սրբազանը՝ շեշտելով, որ կատարուածի մասին ստիպուած է տեղեկացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ԽՍՀՄ Կրօնի Գործերի Խորհրդին եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին[22]:

Արցախի թեմի առաջնորդի բողոքին Ամենայն Հայոց Կաթողիկոսն արձագանգում է առանց յապաղելու՝ Սեպտեմբերի 14ին հերթական նամակն ուղարկելով Միխայիլ Գորբաչովին. «Այսօր ստիպուած ենք կրկին դիմել Ձեզ, այս անգամ խոր վշտով ու վրդովմունքով, տեղեկացնելու համար որ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան վիճակը դարձած է ողբերգական նաեւ եկեղեցական կեանքում»՝ գրում է մասնաւորապէս վեհափառն իր նամակում, ապա ներկայացնում Ամարասում տեղի ունեցածը եւ աւելացնում. «Դիմում ենք Ձեզ ծանր ապրումներով, սակայն տակաւին յոյսով որ Ձեր բարձր հեղինակութեամբ եւ օրէնքի ուժով, եւ ազգութիւնների ինքնորոշման իրաւունքով վերջ կը գտնի Լեռնային Ղարաբաղում հայերի ողբերգութիւնը ...: Անիրաւուած հայերի համբերութեան բաժակը վաղուց լցուած է, եւ նրանք պատրաստ են ազատ մեռնելու քան ստրուկ ապրելու ...: Ձեր չափազանց բազմազբաղ եւ տագնապալի այս օրերին, խնդրում ենք մի պահ գոնէ Ձեր ուշադրութիւնը ուղղէիք դէպի Լեռնային Ղարաբաղում տառապող մեր ժողովուրդը եւ Ձեր խաղարար արդար մի վճիռով փրկէիք նրանց, յանուն Ձեր հռչակած հումանիստական մեծ գաղափարների»[23]:

Թէ ինչ արժէք ունէր գորբաչովեան «ուշադրութիւնը» եւ նրա հռչակած «հումանիստական մեծ գաղափարները» հայ ժողովուրդի, յատկապէս արցախահայութեան համար, կարծում ենք աւելորդ է նշել:

Մենք կը ցանկանայինք կանգ առնել մէկ այլ խնդրի վրայ, որին ուշադրութիւն էր հրաւիրում Արցախի թեմի առաջնորդը. արցախեան խնդրում կրօնական գործօնի վրայ: Սկզբնական փուլում, երբ միջազգային հանրութիւնը դեռ բաւարար պատկերացում չունէր հակամարտութեան բնոյթի վերաբերեալ, Ադրբեջանը պարբերաբար փորձում էր հարցին տալ միջկրօնական հակամարտութեան երանգ: Դա արւում էր մի կողմից արցախահայութեան արդար պահանջի էութիւնը խեղաթիւրելու, միւս կողմից էլ իսլամական երկրների լայն աջակցութիւնը ստանալու նպատակով: Ինչպէս տեսնում ենք, այս պարագայում նոյնպէս Ադրբեջանի քաղաքականութեանն իրենց նպաստն էին բերում խորհրդային իշխանութիւններն ու բանակը: Եւ պիտի խոստովանել, որ ադրբեջանական կողմն այս հարցում որոշակի յաջողութիւններ ունեցաւ: Նման շահարկումներն ադրբեջանական կողմին պատերազմի տարիներին հնարաւորութիւն տուեցին իսլամիստական ծայրայեղական որոշ խմբաւորումների վարձկանների (այդ թւում նաեւ միջազգային ահաբեկիչների) ներգրաւել ռազմական գործողութիւններին, իսկ յետագայում՝ իսլամական աշխարհում (մասնաւորապէս, Իսլամական Համագումար Կազմակերպութեան անդամ երկրների շրջանում) սեփական հեղինակութիւն ստեղծելու, որոշ իսլամական երկրների օգնութեամբ միջազգային ատեաններում (յատկապէս ՄԱԿում) հակահայկական բանաձեւեր անցկացնելու եւ այլ նպատակներ իրականացնելու:

Սակայն Ադրբեջանի այս հերթական աճպարարութիւնը վերջնական յաջողութիւն չունեցաւ շնորհիւ Վազգէն Ա. կաթողիկոսի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սկսած համապատասխան աշխատանքների: Մի կողմից միջեկեղեցական եւ միջկրօնական հարթակներով բազմիցս կատարուեց հիմնախնդրի ճշգրիտ իրազեկումը, միւս կողմից էլ Վազգէն Ա.ն սկսեց Ադրբեջանի հոգեւոր առաջնորդի հետ երկխօսութեան ճանապարհով մի գործընթաց, որը նպատակ ունէր հոգեւոր գործօնի միջոցով նպաստել հակամարտութեան՝ խաղաղ ճանապարհով կարգաւորմանը: Հոգեւոր առաջնորդների երկխօսութիւնն ու փոխադարձ շփումները շարունակուեցին եւ աստիճանաբար աւելի զարգացան յետագայ տարիներին՝ որակական նոր մակարդակների բարձրանալով յատկապէս Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան ընթացքում: Երկու երկրների հոգեւոր առաջնորդների համատեղ յայտարարութիւններում բազմիցս շեշտուեց այն, որ արցախեան հիմնախնդիրը զերծ է կրօնական հիմքից՝ այդպիսով վերջնականապէս խափանելով ադրբեջանական կողմի հերթական ապատեղեկատուութիւններից մէկը[24]:

Վերադառնալով բուն թեմային՝ նշենք, որ Օչիննիկովը Սեպտեմբերի 20ին պատասխանում է Պարգեւ սրբազանին՝ «բացատրելով», թէ այդ օրը ԽՍՀՄ ներքին զօրքերը յատուկ գործողութիւն էին իրականացնում՝ գրոհայիններ (իմա՝ հայ ազատամարտիկների) ձերբակալելու նպատակով: Սակայն սովետական զինծառայողները, իբր, իրենք էին յայտնուել գնդա-

կոծութեան տակ, եւ հաւանաբար հենց այդ ժամանակ էլ տաճարին հասցուել էին այդ «աննշան վնասուածքները»: Իսկ իրենք իբր յարգանքով են վերաբերում ԼՂԻՄ քաղաքացիների կրօնական զգացմունքներին, եւ սովետական բանակը բոլորովին էլ շահագրգռուած չէ միջկրօնական բախումներ հրահրելու հարցում[25]: Կարճ ասած՝ խորհրդային բանակի զինուորները ոչ մի կապ չունեն տեղի ունեցածի հետ, դեռ մի բան էլ չգիտես որտեղից յայտնուած հայ «գրոհայիններն» էին նրանց վրայ կրակել ու հենց հայերն էլ մեղաւոր են ամէն ինչում: Սուտն ու լպիրշութիւնն այնքան բացայայտ է այս «պատասխանում», որ մեկնաբանելն անգամ աւելորդ է:

ԹԵՄԻ ՅԵՏԱԳԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ի հեճուկս այդ ամէնի եւ ստեղծուած բոլոր դժուարութիւնների՝ Արցախի նորաբաց թեմը շարունակում էր աստիճանաբար աւելի ու աւելի զարգացնել իր գործունէութիւնը: Սակաւաթիւ հոգեւորականների շարքերը սկսել էին համալրուել Արցախից եւ Հայաստանից դիմում ներկայացրած մի շարք անձանցով, որոնք յետագայում պէտք է ձեռնադրուէին եւ կազմէին թեմի քահանայից դասի հիմնական մասը:

Վերաբացման հենց առաջին իսկ օրերից սերտօրեն ներգրաւուելով արցախեան շարժմանը՝ թեմի հոգեւորականներն Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ եւ անմիջական աջակցութեամբ աշխատում էին իրենց նպաստը բերել արցախահայութեան արդար պահանջի իրականացմանը: Վազգեն վեհափառը թեմի հոգեւորականների միջոցով բազմիցս մարդասիրական օգնութիւն էր հասցնում ծայրայեղ ծանր վիճակում գտնուող արցախահայութեանը: Բազմաթիւ օրինակներից նշենք, որ հենց 1990ին Վազգէն կաթողիկոսը Պարգեւ սրբազանի միջոցով 1,400,000 ռուբլի է ուղարկում Արցախ՝ անօթեւան փախստականներին կացարաններով ապահովելու համար: Արցախի թեմի միջոցներով իրականացւում են նաեւ մի շարք ընկերային ծրագրեր. օրինակ՝ միայնակ ծերերին խնամելու համար Ստեփանակերտում հիմնւում է տուն-ինտերնատ (ծերանոց), որը պետութեան հոգածութեան ներքոյ է անցնում միայն անկախացումից յետոյ[26]:

1990 Նոյեմբերի 9ին, Վազգէն Ա. հայրապետի օրհնութեամբ եւ Պարգեւ եպիսկոպոսի հրամանով, հիմնադրուեց *Գանձասար* աստուածաբանական հանդէսը[27]: Իր ժամանակի մէջ եզակի այս նախաձեռնութիւնը հսկայ նպաստ բերեց հայ ժողովրդի՝ խորհրդային անաստուածութեան տարիներին կուտակուած հոգեւոր սովը յագեցնելու, ինչպէս նաեւ նորամուտ զանազան աղանդաւորական ուսմունքներին որոշակիօրէն դիմագրաւելու տեսակէտից:

Լայն թափով շարունակւում էին Արցախի թեմի եկեղեցիների բարեկարգման եւ վերականգնման աշխատանքները: Այդ մասին որոշակի պատկերացում կազմելու տեսակէտից բաւականին կարեւոր տուեալներ

ենք ստանում Հայաստանի Ազգային Արխիւում առկայ վաւերագրերից մէկից: Այն պարունակում է «Հայվերականգնում» տրեստի «Արցախ» գիտաարտադրական վերականգնման տեղամասի ճշգրտուած պլանները, որոնց համաձայն 1989-1991 կատարուել կամ պլանաւորուած էր կատարել հետեւեալ աշխատանքները.

Մարտունու շրջան

Ամարասի վանքային համալիրի փլատակների մաքրում (1989-90):

Հացի գիւղի Բռի-եղցի եկեղեցու փլատակների մաքրում, եկեղեցու տարածքի բարեկարգման աշխատանքներ (1989-90):

Հեր-Հեր գիւղի եկեղեցու տարածքի բարեկարգում (1989-90):

Խանլարի շրջան

Գետաշէն գիւղի եկեղեցու վերանորոգման եւ տարածքի բարեկարգման աշխատանքներ (1990-91):

Հադրութի շրջան

Հադրութ քաղաքի Ս. Յարութիւն եկեղեցու վերանորոգման եւ տարածքի բարեկարգման աշխատանքներ (1990-91):

Սպիտակ խաչ եկեղեցու վերանորոգման եւ տարածքի բարեկարգման աշխատանքներ (1990):

Ասկերանի շրջան

Խնածախ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու վերանորոգման աշխատանքներ (1990):

Բալուջա գիւղի եկեղեցու վերանորոգման աշխատանքներ (1990-91):

Սարուշէն գիւղի եկեղեցու տարածքի բարեկարգման աշխատանքներ (1990):

Մարտակերտի շրջան

Գաճասարի վանքային համալիրի ժամանակաւոր ծածկեր, արտաքին ելեկտրականութիւն, եկեղեցու վերանորոգման աշխատանքներ, նախապատրաստական աշխատանքներ (1989-91):

Ներքին Հոռաթաղ գիւղի եկեղեցու վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքներ (1990-91):

Շահումեանի շրջան

Գիւլիստան գիւղի եկեղեցու վերանորոգման աշխատանքներ (1991):

Խարխափոր գիւղի եկեղեցու վերանորոգման աշխատանքներ (1990-91)[28]:

Վերոնշեալն անշուշտ չի ներկայացնում այդ տարիներին Արցախում վերականգնուող կամ բարեկարգուող եկեղեցիների ամբողջական ցանկը եւ այդ ուղղութեամբ կատարուող աշխատանքների լիարժէք ծաւալը, սակայն խնդրոյ առարկայի վերաբերեալ եզակի փաստաթղթերից է:

Զուգահեռաբար նաեւ նոր եկեղեցիներ կառուցելու անհրաժեշտութիւն էր առաջանում: Օրինակ՝ 1990ին նմանատիպ խնդրանքով Վազգէն Ա. կաթողիկոսին, Պարգեւ եպիսկոպոսին եւ Ստեփանակերտի քաղաքային

խորհրդի նախագահ Մ. Միրզոյեանին են դիմում Ստեփանակերտի հաւատացեալները. «Ստեփանակերտ քաղաքի Հայ Առաքելական Եկեղեցու հաւատացեալների մի ստուար խումբ Ձեզ է դիմում, յորդորելով Ձեր համագործակցութիւնը Ստեփանակերտ քաղաքում Հայ Առաքելական եկեղեցի կառուցելու գործում:

Գանձասարի վանքի եւ Ամարասի գործունէութիւնը չեն բաւարարում արցախահայութեան հոգեւոր պահանջներին:

Հայ Առաքելական Եկեղեցու վերածնունդը կը նպաստի Արցախում ազգային-ազատագրական պայքարի ոգու բարձրացմանը»[29]:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱԶԴՈՒՄՆԵՐԸ

Իհարկէ, անհնար է պատկերացնել Արցախի թեմի եկեղեցիների վերադարձի եւ վերաբացման գործընթացն առանց Ադրբեջանի վայնասունի եւ առաջացրած խոչընդոտների: Մայր Աթոռի արխիւում պահպանուել է 1991 Յունուարի 22ին *Բակինսկի Ռաբոչի* թերթի «Անօրինական որոշումները չեղեալ են յայտարուում» հրապարակումը, որը ներկայացնում է Ադրբեջանի ջղաձգումները մասնաւորապէս «աղուանական» Գանձասարի եւ Ամարասի՝ հայերին փոխանցման «անօրինական» որոշումների մասին եւ որոշում է չեղեալ յայտարարել դրանք. «Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների Խորհուրդը որոշում ընդունեց չեղեալ յայտարարել Լեռնային Ղարաբաղի տեղական մարմինների անօրինական որոշումները Ադրբեջանի պատմական եւ մշակութային յուշարձանների փոխանցման հարցի վերաբերեալ: ...Ադրբեջանական ՍՍՀի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի յատուկ կառավարական Կոմիտէի գործունէութեան ընթացքում, որը կազմալուծուած է ՍՍՀՄ Գերագոյն Խորհրդի 1989 Նոյեմբերի 29ի որոշումով, մարզի տարածքում թոյլ էին տրուած Ադրբ. ՍՍՀի պատմական եւ մշակութային յուշարձանների պահպանութեան եւ օգտագործման օրէնքի խախտումներ:

1989ին ՍՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր Կրօնքի Գործոց Խորհուրդը հաշուի չառնելով հանրապետական մարմինների կարծիքը եւ չափազանցելով իրենց լիազօրութեան աստիճանը Մարտակերտի շրջանի Վանք Գիւղի եւ Մարտունու շրջանի Սօս Գիւղի կրօնական համայնքների գրանցման ընթացքում որոշեց տրամադրել իրենց աղուանական ճարտարապետութեան կոթողներ՝ Գանձասարի եւ Ամարասի վանքերը, որոնք գտնուում էին պետութեան հսկողութեան ներքոյ:

Ադրբ. ՍՍՀ Մինիստրների Խորհուրդը դիմեց ՍՍՀՄ Մինիստների Խորհրդին առընթեր Կրօնի Գործոց Խորհրդին պահանջելով չեղեալ յայտարարել հանրապետութեան գերիշխանութիւնը խախտող այդ որոշումը: Այդ կապակցութեամբ Կրօնաց Խորհուրդը ընդունեց համապատասխան որոշում:

Ադրբ. ՍՍՀ Մինիստրների Խորհուրդը կայացնում է ի գիտութիւն առնել, որ ՍՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր Կրօնքի Գործոց Խորհրդի կոլեգիան 1990 Նոյեմբերի 21ին չեղեալ յայտարարեց անօրինական որոշումը:

Ադրբ. ՍՍՀ Մինիստրների Խորհրդի կայացրած որոշումով ընդունում է. Ադրբ. ՍՍՀի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տեղական մարմինների որոշումը այն մասին, որ Մարտակերտի շրջանի Վանք Գիւղի հաւատացեալներին տրամադրուի Գանձասարի վանքը, իսկ Մարտունու շրջանի Սօս գիւղի հաւատացեալներին՝ Ամարասի վանքը, չունի իրաւական ուժ: Մարտակերտի ու Մարտունու շրջանների գործկոմներին առաջարկուած է ապահովել աղօթատներով Վանք եւ Սօս գիւղերի կրօնական համայնքներին: Եթէ անհրաժեշտութիւն ծագի օգտագործելու այդ նպատակների համար պատմական եւ մշակութային յուշարձաններ, որոնք գտնուում են այդ շրջանների տարածքում, համաձայնեցնել այդ հարցը Ադրբ. ՍՍՀ մշակոյթի նախարարութեան հետ եւ ներկայացնել ընդունուած կարգով առաջարկութիւնները Ադրբեջանի Մինիստրների Խորհրդին:

Ադրբ. ՍՍՀ Մինիստրների Խորհրդի որոշումում խնդրանք է ուղղուած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հանրապետական Կազմկոմին համագործակցել նշուած շրջանային գործկոմների հետ այդ հարցը ուսումնասիրելու խնդրանքին:

ՍՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր Կրօնքի Գործոց Խորհրդի Ադրբ. ՍՍՀ լիազօրին առաջարկուած է նման խնդիրներ որոշելուց խիստ կերպով ղեկավարուել օրէնքով, թոյլ չտալ անօրինական եւ չհամաձայնեցուած որոշումների ընդունում»[30]:

Սակայն Բաքուի այս կարգի «որոշումներն» արցախահայութեան համար մօտաւորապէս նոյն նշանակութիւնն ունէին, ինչ որ Արցախն Ադրբեջանի «անբաժանելի մաս» հռչակող յայտարարութիւնները: Արցախցիներն անդառնալիօրէն ընտրել էին սեփական երկրում տանտիրոջ իրաւունքով ապրելու ուղին եւ այլեւս չէին ղեկավարւում Բաքուից եկած որոշումներով ու հրահանգներով:

ԹԵՄԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԿՈՆԴԱԿԸ

Չենք կարող պնդել անմիջական կապի մասին, սակայն նշենք, որ Ադրբեջանի հիստերիային գերազանց պատասխանում է Վազգէն Ա. կաթողիկոսը՝ 1991 Մարտի 8ին արձակելով Արցախի թեմի վերահաստատման հայրապետական կոնդակը.

«ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Անհուն է Մեր հոգու մխիթարութիւնը, որ Մեր գահակալութեան այս օրերին վերստին հաստատւում է հոգեւոր ճշմարտութիւնը, թէ՝ «Աստուած ընդ մեզ է»: Այսպէս է որ մեր հայրենի երկրում յաղթականօրէն հռչակուեց կրօնական խղճի ազատութիւնը, որով ազատ գործունէութեան հորիզոն բացուեց Մեր Մայր Եկեղեցու առաջ, եւ բազմաթիւ նորաբաց վանքերի ու եկեղեցիների շարքում, նաեւ Արցախի տարածքի վրայ, երկար տարիների ընթացքում անգործութեան մատնուած՝ Ամարասի եւ Գանձասարի պատմական վանքերը եւ չորս եկեղեցիներ վերաբացուեցին ի մեծ ուրախութիւն մեր հաւատաւոր զաւակներին:

Որով Լեռնային Ղարաբաղում վերահաստատուեց Արցախի պատմական թեմը, կենտրոն ունենալով Գանձասարի վանքը եւ առաջնորդանիստ կենտրոն՝ Ստեփանակերտ քաղաքը իր եկեղեցիով, թեմական առաջնորդի պաշտօնին կոչելով Ձերդ Գերաշնորհութիւնը, որ ծնունդով հարազատ զաւակն էք Արցախեան հայոց աշխարհի:

Մենք վստահ ենք թէ Դուք, Ձեր հաւատաւոր հոգով ու մտաւորական պատրաստութեամբ, այլեւ Ձեզ յատուկ հայրենասիրական քաջակորով ոգիով պիտի մխիթարէք Արցախի մեր տառապեալ ժողովուրդը եւ պաշտպան կանգնէք նրա արդար իղձերի կենսագործման:

Սիրելի սրբազան, Ձեզ մաղթում ենք տոկուն քաջառողջութիւն, Սուրբ Հոգու ներշնչանք եւ յարատեւութեան կորով, Ձեր աստուածասէր ու ժողովրդանուէր առաքելութեան ճանապարհին:

Թող բարձրեալն Աստուած մշտապէս մնայ Ձեզ օգնական եւ մարտակից, միշտ լուսաւոր պահելով Ձեր կեանքի ուղին:

Ընդունեցէք Մեր հայրապետական սէրն ու օրհնութիւնը Ձերդ Սրբազնութեան, տիրախնամ թեմիդ հոգեւոր դասուն եւ համայն մեր հաւատացեալ ժողովրդեան յԱրցախ:

«Հոգւով եռացէք, Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստեպ կացէք» եւ «եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք» (Հռոմ. 12 եւ 18): Ամէն:

ՎԱՉԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Տուաւ կոնդակս ի 8 Մարտի,
1991 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԽ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1763»:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆ

1991ը Խորհրդային Միութեան ձեւական գոյութեան տարին էր: Սակայն հոգեվարքի մեջ գտնուող կայսրութիւնը շարունակում էր աւելի մեծացնել հայ ժողովրդի եւ յատկապէս արցախահայութեան նկատմամբ ի-

րականացուած ոճրագործութիւնների ծաւալուն ցանկը: Խորհրդային բանակի զինուորները եւ նրանց աջակցութիւնից ծայրաստիճան լկտիացած ադրբեջանցի ՕՄՕՆականները բառացիօրէն ահաբեկումի էին ենթարկում Արցախի բնիկ ժողովրդին: Իսկ Ապրիլի 30ին սկսուած տխրահռչակ «Օղակ» ռազմագործողութիւնը գագաթնակէտին է հասցնում արցախահայութեան նկատմամբ փաստացիօրէն իրականացուող եղեռնը:

Արցախի թեմի արխիւի վաւերագրերը վկայում են, որ յաճախակի էին դարձել նաեւ Արցախի թեմի վրայ կատարուող նպատակաուղղուած յարձակումները: Առաջնահերթ թիրախը թեմի հոգեւորականներն էին եւ Ամարասի ու Գանձասարի վանքերը: Խոչընդոտում են հոգեւորականների տեղաշարժն ու գործունէութիւնը, նրանց վրայ իրականացում են յարձակումներ, սովետական բանակի հովանու ներքոյ ադրբեջանցի ՕՄՕՆականները ծաղրուծանակով, սպառնալիքներով ու հայհոյանքներով ֆիզիկական բռնութիւն են կիրառում որոշ հոգեւորականների նկատմամբ: Քանիցս վանդալիզմի զոհ են դառնում թեմի նորաբաց վանքերը. Խորհրդային բանակի զինուորներն ու ադրբեջանցի ՕՄՕՆականները, արտակարգ դրութեան պայմաններում «անջատողական գրոհայինների որոնման եւ ձերբակալման օպերացիայի» պատրուակով զէնքերով ու վարժեցրած շներով մտնում են եկեղեցիները եւ պղծում դրանք, խոչընդոտում հոգեւոր արարողութիւններին, ահաբեկում հաւատացեալներին: Ամարասը կրկին քանիցս ենթարկւում է գնդակոծութիւնների, Գանձասարի բարձունքից զէնքերի փողերն ուղղւում են հայկական բնակավայրերի վրայ: Պարգեւ եպիսկոպոսի եւ թեմի միւս հոգեւորականների բողոքի նամակները, որոնցից քաղուած են սոյն տեղեկութիւնները[31], որեւէ լուծում չեն ստանում: Բռնութիւնները շարունակուել են ընդհուպ միչեւ տարեվերջ՝ մինչեւ խորհրդային բանակի ստորաբաժանումների հեռանալն Արցախից[32]:

1991 Սեպտեմբերի 2ին Ստեփանակերտում ԼՂԻՄ մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանն ընդունում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան հռչակագիրը, իսկ Սեպտեմբերի 21ին Հայաստանն «այո՛» է ասում անկախութեան հանրաքուէին: Դեկտեմբերին վերջնականապէս անփառունակ կերպով իր գոյութիւնն է դադարեցնում Խորհրդային Միութիւնը եւ կազմաւորւում է ԱՊՀն, Դեկտեմբերի 25ին հրաժարական է տալիս Գորբաչովը (ինչին հետեւում է ԽՍՀՄ ներքին զօրքերի յատուկ նշանակութեան զօրախմբի դուրս բերումն Արցախից), իսկ ամսի 30ին պաշտօնապէս վաւերացւում է արդէն իսկ զուտ *դէ-եուրէ* գոյութիւն ունեցող ԽՍՀՄ վերջանական վախճանը:

Այսպիսով աւարտւում է Արցախի թեմի պատմութեան խորհրդային շրջանի փուլը, եւ թեմն իր պատմութեան մի նոր շրջան է սկսում անկախ հայկական պետականութեան սահմաններում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Շահէն Մկրտչեան, *Արցախեան Գրառումներ*, Երեւան, Նոյեան Տապան, 2001, էջ 120-1:

[2] Մայր Աթոռի եւ Արցախի թեմի արխիւներում առկայ նիւթերը համակարգուած եւ թուակարգուած չեն, ուստի ստիպուած ենք եղել յղում տալ ընդհանրացուած եղանակով. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիւ, Արցախի թեմ» եւ «Արցախի թեմի արխիւ, Նամակներ»:

3 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիւ, Արցախի թեմ:

4 «Արցախահայերը Ուխտի Են Գալիս Մայր Աթոռ», *Էջմիածին*, 1988, ԺԱ-ԺԲ, էջ 86-7:

5 Տեղեկութիւնները ներկայացնում ենք ըստ Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանի բանաւոր հաղորդման:

6 «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Նամակը ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահ Մ.Ս.Գորբաչովին՝ Լեռնային Ղարաբաղում Մի Շարք Եկեղեցիներ Գործող Դարձնելու Համար», *Էջմիածին*, 1989, ԺԱ-ԺԲ, էջ 4-5:

7 Թաթուլ Յակոբեան, *Կանաչ Ու Սեւ. Արցախեան Օրագիր*, Երեւան-Ստեփանակերտ, Հեղինակային Հրատ., 2008, էջ 16:

8 Նշուած թոյլտուութեան մասին գրաւոր վկայութիւն գտնել մեզ չյաջողուեց: Այս եւ յաջորդող մի շարք կարեւոր տեղեկութիւններ բանաւոր կերպով մեզ տրամադրել է Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանը:

9 Թեմի վերաբացման մասին հաղորդող գրականութեան մէջ առկայ է տարածուած սխալ. նշւում է, որ 1989ին թեմը վերակազմաւորուել է հայրապետական կոնդակով (Էդուարդ Դանիէլեան, *Գանձասարի Պատմութիւն*, Երեւան, «Գանձասար» Աստուածաբանական Կենտրոն, 2005, էջ 423. նաեւ՝ Մելանիա Բալայեան, *Հայ Աղուանից Եկեղեցին (Սկզբնաւորումից Մինչեւ Մեր Օրերը)*, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» Հրատ., 2009, էջ 218), սակայն իրականում եղել է հայրապետական տնօրինութիւն. ժամանակի քաղաքական կացութեան պատճառով հայրապետական կոնդակը տրուել է երկու տարի անց՝ 1991 Մարտի 8ին: Յստակեցնենք նաեւ, որ թեմի վերաբացման հայրապետական տնօրինութեան ամսաթիը հենց 1989 Մարտի 10ն է, ինչը մեզ ծանօթ հեղինակներից ոչ ոք չի նշում:

10 Ներկայում՝ եպիսկոպոս, Շիրակի թեմի առաջնորդ:

11 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիւ, Արցախի թեմ. նաեւ՝ Արցախի թեմի արխիւ, Նամակներ:

12 Մկրտչեան, էջ 121:

13 Գարիկ Սրկ. Ասրեան, «Խորհրդային Ադրբեջանի Բռնաճնշումները Եւ Արցախի Թեմի Փակումը (1920-1933)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հատոր ԼԶ.*,Պէյրութ, 2016, էջ 337:

14 Պարգեւ Արք. Մարտիրոսեան, բանաւոր:

15 «Արցախի Թեմում», *Էջմիածին*, 1989, Թ-Ժ, էջ 78:

16 Վարդգես Բաղրեան, *Տեսադաշտ. 1988-1994 (Ղարաբաղեան Ազատամարտ)*, «Սոնա» գրահրատարակչութիւն, Ստեփանակերտ, 2011, էջ 49-54:

17 «Արցախի Թեմում»:

18 Գարիկ սարկաւագ Ասրեան, «Վարագայ Ս. Խաչի Տօնը եւ Արցախի Թեմի Վերածնունդը», *Ազատ Արցախ*, № 115 (2835), 29 Սեպտեմբերի, 2012, էջ 8:
19 Պարգեւ Արք. Մարտիրոսեան, բանաւոր:
20 «Արցախի Թեմում», էջ 78-9:
21 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արխիւ, Արցախի թեմ:
22 Արցախի թեմի արխիւ, Նամակներ:
23 Նոյն:
24 Սոյն խնդրին մենք ամենայն մանրամասնութեամբ անդրադարձել ենք մեր յօդուածներից մէկում (Գարիկ սարկաւագ Ասրեան, «Հոգեւոր Առաջնորդների Ջանքերը եւ Կրօնական Գործօնի Դերը Արցախեան Հիմնախնդրի Խաղաղ Կարգաւորման Գործընթացում», *Անալիտիկոն*, Ստեփանակերտ, 2012, օգոստոս, № 08 (44), էջ 4-8:
25 Արցախի թեմի արխիւ, Նամակներ:
26 Պարգեւ Արք. Մարտիրոսեան, բանաւոր:
27 Արցախի թեմի արխիւ, Նամակներ: Դանիէլեանը հիմնադրման տարեթիւ է նշում 1991ը (Դանիելեան, էջ 428), ինչը սխալ է. թեմի արխիւում առկայ է *Գանձասար Աստուածաբանական Հանդեսի* հիմնադրման հրամանագիրը:
28 ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2, գ. 421, թ. 1-3:
29 Արցախի թեմի արխիւ, Նամակներ:
30 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիւ, Արցախի թեմ:
31 Արցախի թեմի արխիւ, Նամակներ:
32 Պարգեւ Արք. Մարտիրոսեան, բանաւոր:

THE REOPENING OF THE ARTSAKH DIOCESE DURING THE LAST YEARS OF THE SOVIET UNION (1988-1991)

(Summary)

FR. NERSES ASRIAN
monk-deacon@mail.ru

The Artsakh Movement, which started in 1988, was meant to reunite the Autonomous Region of Nagorno Karabakh with Soviet Armenia. It created favorable conditions for reopening the Artsakh Diocese, which had been closed in the 1930s due to Soviet Azerbaijani repression. During that period, the indigenous Armenians of Artsakh, who were living through a period of national and spiritual revival, demanded the reopening of the Armenian churches of the region and the reestablishment of the Armenian Apostolic Church.

Catholicos Vazgen I of the See of Echmiadzin, who had struggled for the restoration of spiritual life in Artsakh for decades, felt the time had come to attain that historic goal.

After preparatory work by the Catholicos, on March 10, 1989 the Artsakh Diocese was reopened and Archbishop Pargev Martirosyan was appointed as head. On July 5 Archbishop Pargev, together with four clergymen, settled permanently in Artsakh and marked the start of the activities of the Diocese. Despite difficulties and the complicated situation in the region, spiritual life began to flourish in Artsakh. Churches were reopened, mass was conducted on Sundays, and the people of Artsakh returned to their Mother Chruch.

The Azerbaijani authorities attempted to oppose the reopening of the Artsakh Diocese by all possible means. The Soviet authorities and army supported Baku's anti-Armenian policies, Artsakh Armenian churches suffered armed attacks and vandalism, the clergy and flock were subjected to psychological and physical persecutions, religious ceremonies and the activities of the diocese were menaced... . The complaint letters of Catholicos Vazgen I and Prelate Archbishop Pargev to Soviet authorities remained unanswered.

At the end of 1991 the Soviet Union disintegrated bringing to an end the two-year soviet history of the Artsakh Armenian Church.